Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ԻՆՈՎԱՑԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲՈՒՀԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Ասատրյան Մ. Ա.
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: margarit.asatryan@gmail.com

Հոդվածում դիտարկվում է ժամանակակից Google-Classroom էլեկտրոնային ուսուցման համակարգի կիրառման հնարավորությունները Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի կրթական գործընթացում: Հիմնավորվում է, որ էլեկտրոնային ուսուցումը՝ որպես կրթության արդիականացման հիմնական գործիք, իր կիրառությունն է գտնում նաև մասնագիտական կրթության ոլորտում՝ համարվելով կրթության որակի կառավարման միջոց: Այն նպաստում է ուսանողների մասնագիտական առանցքային կոմպետենցիաների ձևավորմանը, մասնագիտական պատրաստության գործընթացում կատարում է գիտելիքների, կարողությունների վերահսկման և գնահատման, ուսումնական գործընթացում ուսանողների ակտիվության, ինքնուրույնության, մասնագիտական հետաքրքրությունների ապահովման գործառույթ: Հաշվի առնելով զարգացող հասարակության առանձնահատկությունները և ժամանակակից ուսանողների սոցիալ-կրթական պահանջմունքները՝ Google Classroom էլեկտրոնային ուսուցման հարթակի միջոցով կրթական գործընթացի կառավարումը ՀՊՄՀ-ի կրթության համակարգի արդիականացման առաջնահերթություններից և նշանակալի ձեռքբերումներից մեկն է:

Բանալի բառեր. *էլեկտրոնային ուսուցում, էլեկտրոնային հարթակ, տեղեկատվություն, ինովացիաներ, մասնագիտական կոմպետենտություն, կրթության որակ, կրթական գործընթաց, կրթության արդիականացում, առաջնահերթություն:*

Ներկայացված է խմբագրություն 20.03.2018

Ժամանակակից տեղեկատվական հասարակությանը բնորոշ առանձնահատկություններից մեկը բարձրագույն կրթության դերի արժևորումն է և ուսանողակենտրոն կրթության հարացույցի իրականացումը: Հասարակական-տնտեսական նոր հարաբերությունները, սոցիալ-քաղաքական դրսևորումները, բաց ժողովրդավարական հասարակության կայուն զարգացումը, աշխարհի հետ նրա բազմաբնույթ շփումները կրթական համակարգի առջև դնում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, անձնային և արժեքային համակարգ ունեցող այնպիսի անձի ձևավորման պահանջ, որին ներհատուկ են ակտիվությունը, սոցիալական շարժունությունը, կենսական տարբեր իրավիճակներում հարմարվելու, համագործակցելու կարողությունները, մասնագիտական կոմպետենտությունը: Վերջինս ենթադրում է մեթոդաբանական խոր իմացություն, կառավարման և ինքնակառավարման կարողություններ, հաղորդակցման բարձր մշակույթ, որին պետք է

տիրապետեն ժամանակակից ուսանողները: Այդ համատեքստում առավել շեշտադրվում են ուսանող երիտասարդության սոցիալ-կրթական խնդիրները, որոնք բարդ են, բազմազան և մշտապես հետազոտության առարկա են տարբեր հետազոտողների կողմից:

Ուսանողությունը հատուկ սոցիալական խումբ է, որն ունի իրեն բնորոշ նպատակները, խնդիրները, անհատական և անձնային առանձնահատկությունները, աշխատանքի, կենցաղի յուրահատուկ պայմանները և ներառում է մասնագիտական գիտելիքներով, կարողություններով, հմտություններով օժտված երիտասարդների, ովքեր ունեն ուսումնահիմացական դրդապատճառներ, ուսումնական հետաքրքրություններ, ընտրած մասնագիտության վերաբերյալ որոշակի պատկերացումներ և դիրքորոշումներ: Սոցիալ-մշակութային այդ եզրույթը պատմականորեն ձևավորվել է 11-12-րդ դարերում՝ առաջին համալսարանների ստեղծման հետ մեկտեղ: Որպես փոխակերպվող հասարակության անդամներ՝ ուսանողներն ավելի արագ են հարմարվում նոր միջավայրին, իսկ սոցիալական մյուս խմբերից տարբերվում են ուսման նկատմամբ ունեցած իրենց պահանջմունքներով, դրդապատճառներով, սոցիալական, հասարակական ակտիվությամբ և կրթվածությամբ: Ուսանողական տարիքը կենսական նոր միջավայրին, ուսումնական աշխատանքի նոր ձևերին, հարաբերություններին, նոր պայմաններին հարմարվելու կենսափուլ է, երբ դրսևորվում է բարձր պատասխանատվություն, ձևավորվում են ինքնագնահատման, ինքնահաստատման, ինքնակառավարման կարողություններ, արժեքային կողմնորոշումներ:

Կրթությունը՝ որպես հասարակության զարգացման կարևոր գործոն, հոգևոր գործունեության յուրահատուկ բնագավառ, պետք է ուղղված լինի այնպիսի լիարժեք կենսական միջավայրի ձևավորմանը, որում կարող է ընթանալ հասարակության համար լիարժեք անձի կայացումը: Կրթությունը նաև ուսանող երիտասարդների անձի զարգացման բնութագիրն է, իսկ ինքնագնահատումը և ինքնակրթությունը՝ այն հիմնական հոգեբանական նորագոյացությունները, որոնք բնորոշ են տարիքային այս խմբին: Բուհական կրթության համակարգի կառավարման կատարելագործման նպատակով այդ գործընթացը կառավարող բոլոր սուբյեկտներին անհրաժեշտ են ոլորտին վերաբերող համակարգված գիտելիքներ, նշված առանձնահատկությունների հաշվառում, որն էլ համարվում է դասավանդող-ուսանող փոխգործունեության հիմքը և ուսանողակենտրոն կրթության իրականացման կարևոր նախադրյալ:

Աներկբա է, որ բուհը սոցիալ-մշակութային այն միջավայրն է, որտեղ համապատասխան կրթադաստիարակչական գործընթացում, փոխգործակցության, փոխգործունեության հիման վրա տեղի է ունենում ուսանողի անձի ձևավորումը, իսկ այն, իմացական գործընթաց լինելուց բացի, նաև սոցիալ հոգեբանական գործընթաց է, որը պահանջում է համարժեք կրթական և գիտական միջավայրի ստեղծում [1, էջ 281]:

Նոր իրողությունների արդյունքում զարգանում է նաև բարձրագույն դպրոցի կրթական համակարգը, որը ենթադրում է այդ գործընթացի ամբողջական վերաիմաստավորում և առաջնահերթորեն առնչվում է դիդակտիկական, մշտապես արդիական այնպիսի հարցադրումներին, ինչպիսիք են՝ ինչ սովորեցնել, ինչպես, կազմակերպման ինչ ձևերով և ինչ վերջնարդյունք ենք ակնկալում այդ գործընթացից:

«Մարդկային հասարակության կայուն զարգացումն անհնար է իրականացնել առանց ինովացիաների ներդրման, կրթական հարացույցի նպատակների փոփոխության, դաստիարակության խնդիրների վերաիմաստավորման: Այսօր էապես կարևորվում է կրթության համակարգի կառավարման նոր ռազմավարության մշակման

առաջնահերթությունը, որը պետք է հիմնվի կրթության փիլիսոփայության համեմատաբար կայուն դրույթների և պետական կրթական քաղաքականության վրա» [2, էջ 288]:

Մենք նույնպես համոզված ենք, որ տեղեկատվական հասարակությունը, որում ապրում ենք, ինքնին պահանջում է փոփոխություններ ժամանակակից հասարակության տարբեր ոլորտներում և այսօր առավել քան երբևէ մարդկային հասարակության կայուն զարգացման, հասարակության գիտատեխնիկական, սոցիալական առաջընթացին համահունչ շեշտադրվում է կրթական համակարգի կառավարման նոր ռազմավարության, նոր գործառույթների, ինովացիաների մշակման և ներդնման անհրաժեշտությունը:

Ըստ Թոմաս Բայերի՝ «21-րդ դարում պահանջվում է ամբողջական վերաիմաստավորումն այն ամենի, թե ինչ ենք մենք անում, ինչպես և ինչին ենք սովորեցնում: Անցնում է կամ արդեն անցել է այն ժամանակը, երբ մենք կարող էինք դասախոսություն կարդալ այն հույսով, որ մեր բուհերում միշտ կլինեն մեզ լսող ուսանողներ: Այսօրվա երիտասարդությունը ոչ ավանդական ձևերով և ինքնուրույն սովորելու ընտրության հնարավորություն ունի: Այսօր սովորողները ուսուցման գործընթացի կենտրոնում են՝ որպես ակտիվ մասնակից: Դասավանդողն այնքան տեղեկատվություն չի հաղորդում, որքան կառավարում, ուղղորդում է ուսանողների գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը» [3, էջ 22]:

Ակնհայտ է, որ համընդհանուր գլոբալացումը, տեխնոլոգիական առաջընթացը, մարդկային բանականության բարձր մակարդակն իր հետ բերում է կործանարար ազդեցություններ և մարտահրավերներ՝ երբեմն կասեցնելով նաև հասարակության կայուն զարգացումն ու կրթական համակարգի առաջընթացը: Այդ ազդեցություններն իր վրա կրում է նաև բարձրագույն կրթության համակարգը, որտեղ առկա են կառուցվածքային հիմնախնդիրներ, հակասություններ, կրթության ոլորտի մարտահրավերներ, իսկ առկա խնդիրների լուծումն ու մարտահրավերներին դիմակայելն անհնար է առանց կրթական նոր հարացույցի, ուսումնադաստիարակչական նոր տեխնոլոգիաների ներդնման:

«Մանկավարժական կրթության համակարգի զարգացումը պայմանավորված է նաև նրա՝ միջազգային կրթական հանրությանը ինտեգրացմամբ, պետական կրթական չափորոշիչներին համապատասխանեցմամբ, ուսուցման և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների ներդրմամբ, միջազգային կրթական ծրագրերին մասնակցությամբ, գիտելիքների գնահատման համակարգի՝ միջազգային չափանիշներին համապատասխան արդիականացմամբ» [4, էջ 24]:

Այսօր կրթական համակարգի զարգացմանն ուղղված համաշխարհային առաջատար միտումները կոչված են լուծելու մի շարք խնդիրներ՝ կապված շարունակական, հասանելի կրթության, ժամանակին համահունչ մանկավարժական նոր մտածողության հետ: Այդ գործընթացներին կարող են նպաստել ինովացիաները, մասնավորապես էլեկտրոնային ուսուցումը, որի անհրաժեշտությունը ժամանակակից աշխարհում ակնառու է և լայնորեն կիրառվում է զարգացած շատ երկրներում, որտեղ գործում են էլեկտրոնային ուսուցման իրականացման հատուկ ազգային ծրագրեր՝ համարվելով կրթության արդիականացման հիմնական գործիք: Էլեկտրոնային ուսուցումը կիրառվում է նաև մասնագիտական կրթության ոլորտում՝ դառնալով բուհերի կրթական գործընթացի անբաժանելի մասը:

«Աշխարհի զարգացման միտումներից հետ չի մնում նաև Հայաստանը: Հայաստանի բուհերը ակտիվորեն զարգացնում են էլեկտրոնային ուսուցման տարրերի կիրառումը

իրենց կրթական միջավայրերումում: Դեռևս 2008 թվականից Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը, որում ամրագրված են նաև Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգային դրույթները և ժամանակացույցը՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վերլուծության և համադրման վրա» [5, էջ 48]:

Վերջին ժամանակաշրջանում կրթական հաստատություններում կիրառվում են ինովացիաները և ինովացիոն տեխնոլոգիաները, որոնք ունեն նորարարական բնույթ, նպաստում են մասնագիտական գիտելիքների ձեռքբերմանը, խթանում են ուսումնական գործունեությունը: Մի շարք հեղինակների կարծիքով՝ ինովացիաների էությունը նորարարությունն է, որը պետք է վերաբերի ուսումնական գործընթացի տարբեր բաղադրիչների ակտիվացմանը, առավել ևս բարձրագույն կրթության որակի բարելավմանը:

Սույն հոդվածում մենք քննարկում ենք ինովացիաների ներդնման և կիրառման հիմնախնդիրը՝ այն դիտարկելով որպես կրթության որակի բարելավման և արդյունավետ կառավարման միջոց: Այս իմաստով առանձնացնում ենք երկու դիտանկյուն. մեկը՝ կապված բուն ինովացիաների ներդնման և կիրառման հնարավորությունների, մյուսը՝ կրթության որակի արդյունավետ կառավարման հետ: Միաժամանակ կարևորում ենք ուսանողների՝ առարկայական-մեթոդական, սոցիալական, անձնային, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն սովորելու կարողության ու պատրաստակամության, քննադատական մտածողության, ինովացիաների կիրառման պատրաստակամության կոմպետենցիաների ձևավորումը, որին մեր համոզմամբ առավելագույնը ուղղված են ինովացիաները:

Մեր կարծիքով, ինովացիաների ներդնման, կիրառման և այդ առումով բարեփոխումների գործընթաց կարելի է դիտարկել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում 2015 թվականին Google Classroom էլեկտրոնային ուսուցման համակագի ներդնումը ԲՈՒՀ-ի կրթական գործընթացում, որի անհրաժեշտությունն ու հրատապությունը պայմանավորված էր մի շարք գործոններով՝ ուսուցման որակի բարձրացմամբ, կրթության որակի արդյունավետ կառավարմամբ, կրթության ոլորտի մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ:

Հետևաբար, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնումը բուհի կրթական համակարգ արդիական է այնքանով, որքանով կհաջողվի հասանելի ու մատչելի ձևով ապահովել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ առաջին հերթին ուսանողների անհատական և մասնագիտական աճն ապահովելու համար: Հաշվի առնելով ինովացիաների բացառիկ դերը մասնագիտական պատրաստության գործընթացում՝ մենք համոզված ենք, որ դրանք բուհի կրթական գործընթացի արդյունավետ արդիականացման պայման են, բարձրացնում են ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը՝ դառնալով մասնագիտական պատրաստության արդյունավետ իրականացման գերակա ուղղություններից մեկը: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ ինովացիաների ներդնումը բուհում բարդ գործընթաց է, ունի իր իրականացման մեթոդիկան, ծրագրերը, փորձաքննությունը, դժվարությունները, ակնկալվող արդյունքները:

«2015թ.-նոյեմբերից ՀՊՄՀ-ն պայմանագիր կնքեց Google-ի հետ և սկսեց կիրառել Google for Education հավելվածը առկա ուսուցման ձևի բոլոր կրթական ծրագրերի էլեկտրոնային դասընթացներում: Էլեկտրոնային հարթակի տեխնիկական ներդրման փուլը տևեց 2 ամիս, որի արդյունքում 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակում

առկա բակալավրիական և առկա մագիստրոսական կրթական համակարգերում սովորողների և դասավանդող դասախոսների մեծ մասը ներգրավվեց այդ նորարարական գործընթացում: Ստեղծվեցին անհատական շուրջ 4500 էլ. էջեր և 2000 էլ. դասընթացներ: Իսկ արդեն 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակում ներգրավվեցին առկա ուսուցման ձևում բոլոր սովորողները և դասախոսները, շուրջ 7500 էլ. էջեր և 3000 էլ. դասընթացներ: Ուսանողների և դասախոսների հետ իրականացվեցին վերապատրաստումներ, ստեղծվեցին մեթոդական ուղեցույցներ՝ համակարգից ճիշտ օգտվելու համար: Էլ. դասընթացների հիմնական գործիքն է Google for Education հավելվածի Classroom հարթակը» [5, էջ 49]:

Google Classroom էլեկտրոնային ուսուցման հարթակը վիրտուալ կրթական միջավայր է՝ վեբ տեխնոլոգիաների վրա հիմնված էլեկտրոնային ուսուցման համակարգ, որտեղ էլեկտրոնային ձևաչափով մոդելավորված են ուսումնական նյութերը և դրանց առնչվող տեղեկատվությունը: Էլեկտրոնային հարթակը նոր հնարավորություններ է ընձեռում դասավանդողներին և ուսանողներին ցանկացած պահի առցանց ծառայությունների միջոցով ներգրավված լինել ուսումնական գործընթացում, համատեղ առավել արդյունավետ կազմակերպել այն, որը խնայում է ժամանակը՝ ապահովելով դասավանդող-ուսանող հետադարձ կապն ու արդյունավետ հաղորդակցումը: Էլեկտրոնային ուսուցումը կրթության որակի արդյունավետ կառավարման միջոց է, խթանում է սովորողների իմացական հետաքրքրությունները, ինքնուրույնությունն ու ակտիվությունը, նրանց դարձնելով ոչ թե մանկավարժական ներգործության օբյեկտ, այլ ճանաչողական գործունեության, ինքնադաստիարակության սուբյեկտ: Տեղին է նշել այն հանգամանքը, որ ժամանակակից ուսանողների մեծ մասն այսօր հոգեբանորեն պատրաստ են նորովի սովորելու, քանի որ առավել արագ կողմնորոշվում են տեղեկատվական դաշտում, ակտիվ և շարժունակ են, ընկալունակ փոփոխությունների հանդեպ:

Այժմ ՀՊՄՀ-ում գործում է Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն, որի կազմում ներառված է կրթության էլեկտրոնային կառավարման բաժինը: Վերապատրաստվել է բուհի պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմը՝ նախապատրաստվելով ինովացիոն կրթական գործունեության: Նրանց կողմից մշակվել և էլեկտրոնային հարթակ են տեղադրվել մի շարք դասընթացների ուսումնամեթոդական փաթեթներ, ինտերակտիվ դասախոսություններ, ծրագրեր, ինչպես նաև սեմինար, գործնական պարապմունքների նյութեր, գնահատվող էլեկտրոնային հանձնարարություններ, ստուգման ձևաչափեր, թեստեր, սահիկներ, որոնց բովանդակությունը ժամանակակից պահանջներին համապատասխան հիմնովին վերակառուցվել, արդիականացվել է և շարունակում է կատարելագործվել:

Պարբերաբար հանդիպումներ են իրականացվում բուհի ռեկտորի, պրոռեկտորների, կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պատասխանատուների հետ, ովքեր ներկայացնում են էլեկտրոնային ուսուցման համակարգի կիրառման, բարելավման և զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների բովանդակությունը, սահմանված չափանիշներն ու ցուցիչները և այդ գործընթացներով պայմանավորված հետագա քայլերը:

«Հաշվի առնելով էլեկտրոնային ուսուցման արդիականությունը և պահանջվածությունը, դրա հետ կապված գործընթացների դինամիկան, ՀՊՄՀ-ի նպատակն է բուհի կրթական գործընթացում իրականացնել էլեկտրոնային ուսուցման արագընթաց մեկնարկ: Խնդիրները պայմանավորված են նպատակով, կոնկրետ են, որոշակիացված են ժամանակով, կշռելի են, իսկ նպատակը հասանելի և իրատեսական

է, որը կարելի է հիմնավորել արդեն գոյություն ունեցող կոնկրետ արդյունքներով և էլեկտրոնային ուսուցման իրականացման փորձով» [6, էջ 9]:

ՀՊՄՀ-ում այժմ գործում է շուրջ 10000 էլեկտրոնային օգտատեր, ներառյալ ուսանողները, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը: Բուհուի բոլոր ֆակուլտետների ուսանողների հետ մշտապես իրականացվում է «Դու և Classroom»-ը հանդիպումների շարքը, որի ընթացքում քննարկվում են էլեկտրոնային հարթակին առնչվող և ուսանողներին հետաքրքրող բազմաբնույթ հարցեր, որոնց պատասխանները տրվում են համապատասխան մասնագետների կողմից և, որի արդյունքում ապահովվում է ուսանողների և կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի միջև հետադարձ կապը:

Այսպիսով, ՀՊՄՀ-ում մեր դասավանդման երկարամյա փորձը և ինտերակտիվ դասագործընթացի իրականացումը ցույց տվեց, որ ինովացիաների, մասնավորապես Google Classroom էլեկտրոնային ուսուցման հարթակի կիրառումը բուհում, ապահովում է ուսանողների տեղեկատվական իրազեկվածությունը, ուսումնական գործընթացում ներգրավումը, համատեղ ինտերակտիվ քննարկումները, խթանում է նրանց ինքնուրույնությունը, ակտիվությունը, մասնագիտական հետաքրքրությունները, դասախոս-ուսանող հետադարձ կապը և արդյունավետ հաղորդակցումը:

Կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը նպաստում է նաև ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը, մասնագիտական պատրաստության գործընթացի արդյունավետ իրականացմանը, ձևավորում է համագործակցելու, տեղեկատվությունից օգտվելու, այն մշակելու, վերլուծելու, համակարգելու և կիրառելու կարողություններ:

Ուստի, հաշվի առնելով զարգացող հասարակության և աշխատաշուկայի առանձնահատկությունները, ժամանակակից ուսանողների սոցիալ-կրթական պահանջմունքները, Google Classroom էլեկտրոնային ուսուցման հարթակի միջոցով կրթական գործընթացի կառավարումը Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի կրթության համակարգի արդիականացման առաջնահերթություններից և նշանակալի ձեռքբերումներից մեկն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Մ.Ա., Ուսանողակենտրոն կրթության իրականացման սոցիալ-մանկավարժական նախադրյալները բուհում, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «Մանկավարժ» հր. 2013:
2. Ասատրյան Լ.Թ., 21-դարի կրթության ոլորտի մարտահրավերները կայուն զարգացման համատեքստում, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «Մանկավարժ» հր.2013:
3. Байер Т.Р., Новые формы в учебном процессе: вызовы и угрозы для вузов в 21-ом веке, Сборник научно-образовательных докладов и статей. АГПУ им.Х. Абовяна. «Модернизация образования в контексте современных педагогических парадигм». Ереван, АГПУ-2014.
4. Ղուկասյան Ա.Ա., Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ա.Ս., Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները, գիտամեթոդական ձեռնարկ, Եր., 2005, 274 էջ:

5. Саргисян А.Т., Предпосылки внедрения новейших цифровых технологий в образовательный процесс в АГПУ. Проблемы современной русистики, Научно-методический журнал, Ереван, 2016.
6. Мирзаханян Р.К., Рациональная реконструкция и модернизация образовательной системы АГПУ в аспекте прерогатив развития вуза. АГПУ им. Х.Абовяна, Ученые записки, № 3-4. (28-29), Ереван, 2016.

РЕЗЮМЕ

ПРИМЕНЕНИЕ ИННОВАЦИИ КАК СРЕДСТВА УПРАВЛЕНИЯ КАЧЕСТВОМ ОБРАЗОВАНИЯ

АСАТРЯН М.А.

В статье рассматривается применение современной системы электронного обучения Google Classroom в учебном процессе АГПУ им. Х.Абовяна. Обосновано, что электронное обучение как основной инструмент модернизации образования находит свое применение также в области профессионального образования, рассматриваясь как средство управления качеством образования, способствует формированию профессиональных компетенций студентов, в процессе профессиональной подготовки педагогов выполняет функцию контроля, оценки способностей, в процессе обучения выполняет функцию обеспечения активности, самостоятельности, профессиональных интересов студентов.

Принимая во внимание особенности развивающегося общества и социально-образовательные потребности современных студентов, управление учебным процессом через платформу электронного обучения Google Classroom является одним из приоритетов и значительных достижений модернизации системы образования АГПУ.

SUMMARY

THE USAGE OF INNOVATIONS AS MEANS OF CONTROLLING THE QUALITY OF EDUCATION

ASATRYAN M. A.

The opportunities of the usage of modern Google Classroom e-learning system in educational process of ASPU after Kh. Abovyan is considered in the article. It is proved that e-learning, as the main tool for modernizing education, is used as well as in the area of professional education, considering as a controlling means of the quality of education, which promotes the formation of students' professional, informative, communicative competences, carries out control, assesement of knowledge, abilities in the process of pedagogues' professional preparation, the function of providing students' activity, self-independence, professional interests in the educational process. Taking into account the peculiarities of developing society and the needs of contemporary students, the controlling of educational process through the Google Classroom e-learning system is one of the priorities and significant achievements in modernizing educational system of ASPU.